

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Դավթյան 2006թ.

Հաշվի առնելով, որ գլոբալ և տարածաշրջանային բնապահպանական խնդիրների լուծումը հնարավոր է միայն միացյալ ճիգերով, Հայաստանը իր անկախության առաջին իսկ տարիներից հետևվողականորեն զարգացնում է միջազգային համագործակցությունը բնապահպանության ոլորտում, հաշվի առնելով երկրի պահանջները ու հնարավորությունները և միջազգային մակարդակով ստեղծված հնարավորությունները: Դրան ազդակ հանդիսացավ 1992 թ. Ռիո դե Ժանեյրոյում կայացած Շրջակա միջավայր և զարգացում՝ ՄԱԿ-ի համաշխարհային գազաթափոդովը: Դա շրջակա միջավայրի հարցերով առաջին և խոշորագույն համաժողովն էր, որին Հայաստանը մասնակցում էր անկախ պետության կարգավիճակով և որի սկզբունքները շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման բնագավառում ընդունեց որպես հետագա գործողությունների հիմք:

Միջազգային համագործակցության ուղղությունների զարգացման հարցում կարևոր դեր է խաղում միջազգային խոշոր բնապահպանական կառույցների քաղաքականությունը և միջազգային գործընթացների ուղղվածությունը, այդ թվում Եվրոպական կառույցների գերակայությունների և ուշադրության ուղղվածությունը դեպի արևելյան Եվրոպայի տարածաշրջան և բնապահպանական խնդիրների լուծման համալիր տարածաշրջանային մոտեցում:

Հայաստանը բնապահպանական ոլորտում ակտիվորեն համագործակցում է հետևյալ միջազգային կազմակերպությունների հետ.

ՄԱԿ-ի Շրջակա Միջավայրի Ծրագիր /ՄԱԿ-ՇՄԾ/

Հանդիսանալով համաշխարհային մակարդակով բնապահպանական քաղաքականության հարցերով կարևորագույն կառույց, ՄԱԿ-ՇՄԾ մեծ դեր է կատարում Հայաստանի բնապահպանական գործունեության զարգացման հարցում: ՄԱԿ-ՇՄԾ կողմից ի հայտ են բերվում ժամանակակից և արդիական բնապահպանական խնդիրներ և մշակվում են այդ խնդիրների լուծման ուղղիներ: ՄԱԿ-ՇՄԾ համակարգում է գլոբալ բնապահպանական կոնվենցիաների իրականացումը համաշխարհային մակարդակով, և այդ լիազորությունների շրջանակներում իրականացվում է միջոցառումներ և ծրագրեր՝ ուղղված կոնվենցիաների իրականացման հարցում աջակցություն ցուցաբերելու և երկրներին:

2005թ մայիսի 5-7ը Երևանում տեղի ունեցան հանդիպումներ ՀՀ բնապահպանության նախարարի և ՄԱԿ-ի ՇՄԾ-ի Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրենի միջև: Բնակցությունների արդյունքում կողմերը համաձայնվեցին համագործակցել մի շարք բնապահպանական խնդիրների շուրջ՝ Կենսաբազմազանության, ներառյալ կենսաանվտանգությունը, մթնոլորտի, ջրերի, և հողերի պահպանության, թափոնների կառավարում, ներառյալ վտանգավոր քիմիական նյութերի և այլի վերաբերյալ

բնապահպանական ծրագրերի իրականացում, ուսուցողական սեմինարների կազմակերպում: Փոխադարձ պատրաստակամություն ցուցաբերվեց շարունակելու գործնական համագործակցությունը և խթանելու ազգային և տարածաշրջանային մակարդակով ՄԱԿ-ի ՇՄԾ-ի քաղաքական մոտեցումների իրականացումը:

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր /ՄԱԿ-ԶԾ/. ՀՀ բնապահպանության նախարարությունը ՄԱԿ-ԶԾ /ի դեմս Հայաստանյան գրասենյակի/ հետ համագործակցում է շուրջ 10 տարի: ՄԱԿ-ԶԾ աջակցությամբ երկրում իրականացվել են բազմաթիվ բնապահպանական ծրագրեր, կազմակերպվել են միջոցառումներ, հրատարակվել են մասնագիտական, տեղեկատվական և գովազդային նյութեր: ՄԱԿ-ԶԾ մեծ աշխատանք է կատարում բնակչությանը էկոլոգիական խնդիրների վերաբերյալ իրազեկման հարցում և աջակցում է հասարակության ընդգրկմանը իրականացվող ծրագրերին:

Բնապահպանական գործունեության ծավալման և իրականացման հարցով Հայաստանը համագործակցում է մի շարք այլ միջազգային կառույցների հետ, որոնցից են՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը /ԵՀԱԿ/, Եվրախորհուրդը, Համաշխարհային առողջապահական կազմակերպությունը, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը /ԳԷՀ/ Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպությունը, Բնության պահպանության համաշխարհային հիմնադրամը /WWF/, այլ:

Վերջին տարիներին առավել ակտիվացել է բնապահպանական համագործակցությունը առանձին երկրների հետ:

Ընդունելով բնապահպանության ժամանակակիրթ մոտեցումները Հայաստանը որդեգրել է բոլոր խոշոր համաշխարհային վեհաժողովների որոշումները և վավերացրել է երկրի համար կարևոր միջազգային բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնց իրականացման ուղղությամբ երկրում մշակվում են համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն:

Հարկ է նշել, որ գլոբալ կոնվենցիաների իրականացման համար, առնվազն գործողությունների ծրագրերի և հայեցակարգերի մշակման փուլում, հանրապետությունը ֆինանսական և խորհրդատվական աջակցություն է ստանում միջազգային ֆինանսական կառույցների կողմից: Այդ հարցի շուրջ Հայաստանը համագործակցում է Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության, Համաշխարհային Բանկի և այլ կառույցների հետ:

Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից Հայաստանին աջակցություն է ցուցաբերվում նաև բնապահպանական բնույթի այլ ծրագրերի իրականացման համար, ինչպեսիք են ջրերի, թափոնների, շրջակա միջավայրի և աղկատության նվազեցման, բնապահպանական օրենսդրության զարգացման հարցերով ծրագրերը

Տարածաշրջանային համագործակցություն

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից է տարածաշրջանային համագործակցության զարգացումը, և այդ պարագայում առանձնակի ուշադրություն է դարձվում բնապահպանական ոլորտին:

Համագործակցությունը ծավալվում է ինչպես ընդհանուր միջազգային համաձայնագրերի, կոնվենցիաների իրագործման, տարածաշրջանային գործընթացներին մասնակցության, այնպես էլ առանձին պետությունների կամ կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով: Պետք է նշել, որ այդ ուղղությամբ վերջին տարիներին զգալի առաջընթաց է նկատվում, և դրա ապացույցն են հանդիսանում մի շարք իրականացվող ծրագրերը:

Ինտեգրացում Եվրոպական բնապահպանական գործընթացներին

Հայաստանը բավականաչափ ակտիվորեն ընդգրկվում է Եվրոպայի տարածաշրջանի բնապահպանական գործունեությանը: Երկրի ղեկավարները մասնակցում է Եվրոպական խոշորագույն բնապահպանական համաժողովների նախապատրաստական գործընթացներին և հիմնական քաղաքական փաստաթղթերի մշակմանը: Կարևորագույն Եվրոպական համաժողովներից, որոնց աշխատանքներին մասնակցել է Հայաստանը, հարկ է նշել Շրջակա միջավայրը Եվրոպայի համար՝ գործընթացի շրջանակներում կայացած Եվրոպայի շրջակա միջավայրի նախարարների կոնֆերանսները, Շրջակա միջավայր և առողջություն՝ Եվրոպական գործընթացի շրջանակներում կայացած շրջակա միջավայրի և առողջապահության նախարարների կոնֆերանսներն, Եվրոպական տարածաշրջանային բնապահպանական կոնվենցիաների Կողմ-երկրների հանդիպումներ, այլ:

Նշված համաժողովների քաղաքական ծրագրային փաստաթղթերը ուղեցույց են հանդիսանում երկրների հետագա տարիների գործունեության համար:

Վերջին տարիներին Եվրոպական մակարդակով ընդունված կարևոր փաստաթղթերից են՝ ԱԵԿԿԱ երկրների Էկոլոգիական ռազմավարությունը, Երեխաների շրջակա միջավայր և առողջություն՝ գործողությունների շրջանակային պլանը, Կրթությունը հանուն կայուն զարգացման՝ հռչակագիրը:

Վերջին տարիների նվաճումներից ուշադրության է արժանի 2004թ հունիսի 14-ին Հայաստանի ի թիվս այլ Կովկասյան երկրների ընդգրկումը ԵՄ՝ Եվրոպական Հարևանության Քաղաքականության /ENP/ շարքում: ՀՀ բնապահպանության նախարարությունը ելնելով երկրի շահերից և առաջնահերթ խնդիրներից ներկայացրել է իր առաջարկությունները՝ Եվրոպական Հարևանության քաղաքականության շրջանակներում մշակվող Հայաստան-ԵՄ Գործողությունների Ծրագրում ներառելու համար:

Եվրոպական տարածաշրջանային այլ կարևոր նախաձեռնություններից են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի /ՄԱԿ-ԶԾ/, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր /ՄԱԿ-ՇՄԾ/ և ԵԱՀԿ կողմից համատեղ իրականացվող Շրջակա միջավայր և անվտանգություն գործընթացը, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Տրանսպոտ, շրջակա միջավայր և առողջություն գործընթացը, Եվրոպայի և Հյուսիսային Ասիայի երկրներում անտառների կառավարման և իրավակիրառման հիմնախնդիրներ միջազգային բանակցային գործընթաց, այլ:

Կովկասի տարածաշրջանի մակարդակով բնապահպանական համագործակցությունը հիմնականում իրականացվում է միջազգային ֆինանսավորմամբ իրագործվող միջազգային և տարածաշրջանային բնապահպանական ծրագրերի շրջանակներում: Կովկասյան երկրների բնապահպանական համագործակցության համակարգման հարցում մեծ է Կովկասի Տարածաշրջանի Բնապահպանական Կենտրոնի /ՏԲԿ/ դերը: Հայաստանը կենտրոնի հիմնադիր երկրներից է, և ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչը հանդիսանում է ՏԲԿ Վարչության նախագահ:

Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական համագործակցությունը ընթանում է որոշակի խոչընդոտներով, որոնց պատճառն են հանդիսանում ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հարցերը: Գիտակցելով, որ քաղաքական խնդիրներից դուրս գտնվող շրջակա միջավայրի պահպանության գործունեությունը կարող է բարենպաստ դեր ունենալ տարածաշրջանում գործնական կապերի ընդլայնմանը, ՀՀ բնապահպանության նախարարությունը հետևողականորեն անց է կացնում տարածաշրջանի բոլոր երկրների հետ համագործակցության քաղաքականություն: